ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 սեպտեմբերի 2021թ. N 370-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» N 987-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 6-րդ ենթակետին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականիդեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի՝ ս/թ օգոստոսի 25-ի N 1/փ-259 դրական եզրակացությունը և Ջերմուկ համայնքի ավագանու 14.09.2021 թ. N 66-Ա որոշումը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականությունը հանդիսացող 10-002-0445-0024 կադաստրային ծածկագրով 1,2 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի (հողատեսքը՝ այլ) նպատակային նշանակությունը փոխել որպես հատուկ նշանակության հողերի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, քաղաք Ջերմուկ, Ձախափնյակ թաղամաս, 20-րդ փողոց, 1-ին փակուղի N 1:

3. Սույն որոշումը ենթակա է գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2021 սեպտեմբերի 15
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 սեպտեմբերի 2021թ. N 371-Ա

ԿԱՄՈ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները և հաշվի առնելով Կոտայքի մարզի Քարաշամբ գյուղի բնակիչ Կամո Ռևիկի Մելքոնյանի դիմումը (մտից N 1404, 15.09.2021 թ.)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Թույլատրել Կամո Ռևիկի Մելքոնյանին սեփականության իրավունքով պատկանող Ջերմուկ քաղաքի Երևանյան խճուղու N 10/3, N 10/3/1 և N 10/3 հասցեներում գտնվող կից հողամասերը միավորելու որպես մեկ գույքային միավոր և տրամադրել հետևյալ հասցեն՝ Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Երևանյան խճուղի N 10/3, 10/3/1, 10/5:

2. Ջերմուկ քաղաքի Երևանյան խճուղի N 10/3, 10/3/1, 10/5 հասցեում գտնվող շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասը վերահասցեավորել՝ *Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Երևանյան խճուղի N 10/3:*

3. Չեղյալ համարել Կամո Ռևիկի Մելքոնյանին սեփականության իրավունքով պատկանող շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված և կից հողամասերի նախկին հասցեները:

4.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2021 սեպտեմբերի 15
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 սեպտեմբերի 2021թ. N 372-Ա

«ՀՈՎԶԱՎ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման, հիմք ընդունելով «ՀՈՎԶԱՎ» ՍՊ ընկերության տնօրենի ս/թ սեպտեմբերի 13-ի դիմումը (մտից N 1398)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. «ՀՈՎԶԱՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Վայոց Ձորի մարզի Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի ճապանուղին սպասարկող շինությունների հիմնանորոգման և նորերի կառուցման համար տալ շինարարության թույլտվություն:

2. «ՀՈՎԶԱՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ Ջերմուկ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՀՈՎԶԱՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2021 սեպտեմբերի 17
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 սեպտեմբերի 2021թ. N 373-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի N 130-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ուժը կորցրած ճանաչել Ջերմուկ համայնքի ղեկավարի 2018 թվականի օգոստոսի 1-ի «Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը որպես առանջին միավոր ճանաչելու և համայնքային սեփականություն գրանցելու մասին» N 130-Ա որոշումը՝ հաշվի առնելով այն, որ նշված հողամասի վրա առկա է Ջերմուկ քաղաքի բնակիչ Արտավազդ Վարազդատի Գևորգյանի կողմից ինքնակամ կառուցված շինություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021 սեպտեմբերի 17
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 սեպտեմբերի 2021թ. N 374-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՀԵՐ ԳՅՈՒՂԻ 14-ՐԴ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԱՅԴ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 6-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով Հերհեր գյուղի գյուղական խորհրդի գործադիր կոմիտեի աճուրդ անցկացնող հանձնաժողովի 1993 թվականի հունիսի 15-ի՝ Իրացվող արտադրական նշանակության օբյեկտների վաճառքի ակտը և հաշվի առնելով Հերհեր գյուղի բնակիչ Հայկ Գուրգենի Սարգսյանի դիմումը (մտից N 131, 26.01.2021 թ.)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Վերականգնել Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղի բնակիչ Հայկ Գուրգենի Սարգսյանի կողմից Հերհեր գյուղի գյուղական խորհրդի գործադիր կոմիտեի աճուրդ անցկացնող հանձնաժողովի 1993 թվականի հունիսի 15-ի՝ Իրացվող արտադրական նշանակության օբյեկտների վաճառքի ակտի հիման վրա աճուրդով ձեռք բերված անասնաշենքի (այսուհետ՝ շինություն) պահպանման ու սպասարկման համար առանձնացված, Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղի 14-րդ փողոցի վրա գտնվող հողամասի (կադաստրային ծածկագիր՝ 10-028-0054-0003) հողհատկացման հիմքերը՝ 3400,5 քմ մակերեսի չափով:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ սույն որոշման 1-ին կետում նշված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, գյուղ Հերհեր, 14-րդ փողոց N 4:

3. Հաշվի առնելով, որ սույն որոշման 1-ին կետում նշած հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և հիմք ընդունելով Հերհեր գյուղի բնակիչ՝ սույն որոշման 1-ին կետում նշված հասցեում գտնվող շենքի սեփականատեր Հայկ Գուրգենի Սարգսյանի կողմից հողամասի կադաստրային արժեքն ամբողջությամբ՝ միանվագ վճարելու փաստը (հողամասը գտնվում է Վայոց ձորի մարզի տարածագնահատման 14-րդ գոտում,

կադաստրային արժեքը՝ 754615 (յոթ հարյուր հիսունչորս հազար վեց հարյուր տասնհինգ) դրամ)՝ճանաչել նրա սեփականության իրավունքը հողամասի նկատմամբ:

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի Կոմիտեի ստորաբաժանման կողմից:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայկ Գուրգենի Սարգսյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021 սեպտեմբերի 23
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 սեպտեմբերի 2021թ. N 375-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,006 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգի» հիման վրա **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Ջերմուկ քաղաքի Ջիվանու փողոցի վրա գտնվող 0,006 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասը, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, ճանաչել որպես առանձին գույքային միավոր և ներկայացնել իրավունքի պետական գրանցման:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Ջիվանու փողոց N 5:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2021 սեպտեմբերի 23
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 սեպտեմբերի 2021թ. N 376-Ա

ՎԱՐԴԱՆ ԵՂՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ՝ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂԻ 6-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածին համապատասխան՝ հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչ Վարդան Զորիկի Եղյանի դիմումը (մտից N 1410, 17.09.2021 թ.)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Վարդան Զորիկի Եղյանին սեփականության իրավունքով պատկանող Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի 6-րդ փողոցի N 16 հասցեում գտնվող 0,22 հա մակերեսով հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բաժանել երկու առանձին գույքային միավորների՝ ըստ «Տիգրան Աղաջանյան» ԱՁ–ի կողմից տրամադրված հատակագծի:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» 29-րդ կետի 2-րդ ենթակետի և 33-րդ կետի հիման վրա սույն որոշման առաջին կետի հիմքով առաջացած նոր գույքային միավորներին տրամադրել հետևյալ հասցեները.

Ջերմուկ համայնք, գյուղ Գնդեվազ, 6-րդ փողոց N 15, մակերեսը՝ 0,17 հա

Ջերմուկ համայնք, գյուղ Գնդեվազ, 6-րդ փողոց N 15/1, մակերեսը՝ 0,05 հա

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2021 սեպտեմբերի 24
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 սեպտեմբերի 2021թ. N 377-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 1/10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ՋԵՐՄՈՒԿԻ ԸՄՊԵԼԱՍՐԱՀ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 20-ի «Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը՝ բնակելի, ոչ բնակելի տարածքները և ավտոտնակները վարձակալության իրավունքով տրամադրելու, վարձավճարների չափը սահմանելու մասին» N 42-Ա որոշման, հաշվի առնելով «Ջերմուկի Ըմպելասրահ» ՍՊ ընկերության տնօրեն Տիգրան Հովհաննիսյանի դիմումը (մտից՝2021 թվականի սեպտեմբերի 15-ի N 1403)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկի համայնքապետարանի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2009 թվականի հոկտեմբերի 2-ի N 2623641 վկայական) Ջերմուկ քաղաքի Վարդանյան փողոցի N 1/10 հասցեում գտնվող հասարակական նշանակության 25,77 քմ մակերեսով ոչ բնակելի տարածքը (այսուհետ՝ անշարժ գույք) 10 (տասը) տարի ժամկետով, որպես գրասենյակային տարածք օգտագործելու նպատակով վարձակալության իրավունքով տրամադրել «Ջերմուկի Ըմպելասրահ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ամսական վարձավճարի չափ սահմանելով 1300 (հազար երեք հարյուր) դրամ:

2. Սահմանել, որ՝

ա. անշարժ գույքի ընթացիկ վերանորոգման պարտավորությունը և ծախսերը կրում է վարձակալը,

բ. անշարժ գույքի հիմնական վերանորոգման պարտավորությունը և ծախսերը կրում է վարձատուն

գ. երրորդ անձին ենթավարձակալության տրամադրումը չի թույլատրվում առանց վարձատուի համաձայնության

դ. վարձավճարը վճարվում է մինչև ընթացիկ ամսվա 10-ը

ե. եթե կողմերից որևէ մեկը մինչև պայմանագրի ժամկետի ավարտը չի ծանուցել մյուս կողմին պայմանագիրը լուծելու մասին, ապա այն համարվում է անորոշ ժամկետով կնքված (երկարաձգված)

գ. գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարվում է վարձակալի հաշվին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Ջերմուկի Ըմպելասրահ» ՍՊԸ–ի տնօրեն Տիգրան Հովհաննիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից և գործում է ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից ՍՊԸ-ի վարձակալության իրավունքը գրանցելու օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021 սեպտեմբերի 24
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 սեպտեմբերի 2021թ. N 378-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ի N 174-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա և հաշվի առնելով ՀՀ Կադաստրի կոմիտեի՝ 16.09.2021 թ. Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին N Կ–16092021-10-0109 որոշումը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2021 թվականի ապրիլի 1-ի «Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 15-րդ փողոցի վրա գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 48,2 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված շինությունը համայնքի սեփականություն համարելու, օրինականացնելու և հասցե տրամադրելու մասին» N 174-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 4-րդ կետում «*1/31*» թիվը փոխարինել «*1/55*» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2021 սեպտեմբերի 27
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 սեպտեմբերի 2021թ. N 379-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 221-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի՝ ս/թ սեպտեմբերի 24-ի N 01 /08/6123-2021 գրությունը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը հաստատելու մասին» N 221-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

ա. որոշմամբ հաստատված կանոնակարգի 28-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9.1 ենթակետով՝ «9.1) ապահովել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով սահմանված՝ աշխատանքի (ծառայության) ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերի ստուգումը համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող, քաղաքացիական աշխատանք կատարող և/կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձի աշխատանքի (ծառայության) ներկայանալիս, ինչպես նաև պատասխանատու է սանիտարահամաճարակային անվտանգության կանոններով սահմանված համապատասխան գրանցամատյանների վարման, դիտարկումների իրականացման համար:»,

բ. 32-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9.1 ենթակետով՝ «9.1) աշխատանքի (ծառայության) ներկայանալիս սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման պատասխանատու նշանակված անձին ներկայացնել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով սահմանված՝ աշխատանքի (ծառայության) ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերը, ընդ որում՝ մինչև նշված պարտականության խախտումը վերացնելը յուրաքանչյուր աշխատանքային օր աշխատանքի (ծառայության) ներկայանալը համարվում է (դիտվում է) որպես առանձին (ինքնուրույն) կարգապահական խախտում:»

գ. 50-րդ կետը «բացատրություն» բառից հետո լրացնել «, սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների խախտում հայտնաբերելու դեպքում առերևույթ խախտում թույլ տված համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող, քաղաքացիական աշխատանք կատարող և/կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձը ծառայողական քննության (կարգապահական վարույթի) ընթացքում քննարկվող խախտման մասին պարտավոր է գրավոր բացատրություն (զեկուցագիր) ներկայացնել հատուկ՝ մեկօրյա (աշխատանքային) ժամկետում:» նախադասությամբ,

դ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 50.1 կետով՝ «50.1. Համապատասխան սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների խախտում հայտնաբերելու դեպքում առերևույթ խախտում թույլտված անձի վերաբերյալ տվյալները պատասխանատու նշանակված անձի կողմից մեկօրյա (աշխատանքային) ժամկետում ներկայացվում են տվյալ անձին կարգապահական պատասխանատվության ենթարկելու (կարգապահական տույժ կիրառելու) իրավասություն ունեցող պաշտոնատար անձին կամ խախտում թույլ տված անձի անմիջական ղեկավարին (վերադասին), որն էլ պարտավոր է խախտման մասին մեկօրյա (աշխատանքային) ժամկետում տեղեկացնել կարգապահական պատասխանատվության ենթարկելու (կարգապահական տույժ կիրառելու) իրավասություն ունեցող անձին:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2021 սեպտեմբերի 27
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 սեպտեմբերի 2021թ. N 380-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՄՐԱՇԵՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐԳԱՄ ՎԱՆԻԿԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Կարմրաշեն գյուղի բնակիչ Արգամ Վանիկի Առաքելյանի դիմումը (մտից N 1437, 27.09.2021 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետի 27.06.1997 թ. N 98 որոշմամբ Ջերմուկ համայնքի Կարմրաշեն գյուղի բնակիչ Արգամ Վանիկի Առաքելյանին սեփականաշնորհված Ջերմուկ համայնքի Կարմրաշեն գյուղում գտնվող10-027-0004-0027 կադաստրային ծածկագրով հողամասին և բնակելի տանը՝ կից օժանդակ կառույցներով, տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, գյուղ Կարմրաշեն, 7-րդ փողոց N 25 բնակելի տուն:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2021 սեպտեմբերի 28
Ջերմուկ